«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԽՍՀՄ Ֆինժողկոմ՝
Գ. ԳՐԻՆԿՈ

«ՀԱՄԱՁԱՅՆՎԱԾ Է»
ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության
կից Պետվարկին յով խնայգործին
ղեկավարող կենտրոնական ոչ.
հանձնաժողովի նախագահ՝
ԶՈՒՅԱՅԵՎ

ՀՐԱՄԱՆԳ № 1964

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԵՏԱԿԱՆ «ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ» ԻՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ (ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ)

(Հրապարակվում է ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի փոխառության բաց թողնման մասին վորոշման հիման վրա)

1. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. «Յերկրորդ հնգամյակի փոխառության» իրացման կամպանիան գյուղում պիտի տարվի կոլտնտեսական գյուղացիության և աշխատավոր մենատնտեսներին՝ վաղվա կոլտնտեսականներին՝ սոցիալիստական շինարարության մարտական խնդիրների շուրջը, յերկրորդ հնգամյակի առաջին տարվա խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու լոզունգի տակ: Փոխառության իրացման գործը պահանջում է դարձնել իր վրա հատուկ ուշադրություն, ամբողջ գյուղական հասարակայնության, ամբողջ խորհրդային ապարատի կողմից:

Կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների մեջ, փոխառության իրացման կամպանիայում (բաժանեգրության ընդունումն, հաշվառք և հաշվեավություն, փոխառության մուծումների հավաքում)

22 NOV 2011

պետք է ներգրավվեն սոցիալիզմի գործին նվիրված, ստուգված կոլտնտեսականները, կոլտնտեսուհիները և գյուղական ակտիվիստները:

Փոխառության կամպանիան պետք է սարքի լայն ծավալված մասսայական — քաղաքական աշխատանքների հիման վրա: Կամավորությունը հանդիսանում է փոխառության իրացման անսասան հիմքը: Խիստ արգելվում է փոխառության իրացման գործում կիրառել վորևէ վարչական հարկադրական միջոց:

Կամավորությունը՝ յենթադրում է փոխառության կամպանիայի անցկացման ժամանակ, խորացված մասսայական — բացատրական աշխատանքի մեծ կազմակերպվածություն: Այդ աշխատանքների հիման վրա պետք է տալ ջախջախիչ հակահարված դասակարգային թշնամի՝ կուլակային տարրերին և նրանց հակահեղափոխական ագիտացիային՝ փոխառության դեմ:

2. Փոխառության կամպանիան գյուղում սկսվում է 1933 թ. մայիսի 15-ից և տարվում է այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսականի և յուրաքանչյուր անհատական տնտեսության լրիվ ընդգրկումըն ապահովված լինի ԽՍՀՄ ԿԳԿ-ի կողմից առանձին շրջանների և մարզերի համար սահմանված ժամկետին, սակայն վոչ ուշ, քան 1933 թ. օգոստոսի մեկը:

Յուրաքանչյուր շրջանի տերիտորիայի վրա գտնըվող գյուղական ազգաբնակչության մեջ, փոխառության իրացման կամպանիայի ղեկավարությունն իրականացվում է շրջգործկոմի նախագահության կողմից, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների քաղբաժինների օժանդակությամբ և ԳԱԽԴ-ի ու ԳՎ-ի սիստեմի օժանդակող հանձնաժողովների անմիջական մասնակցությամբ:

ՀԱՍՍՐ
1-31369ік

3. Փոխառության իրացման կազմակերպչական և գործառնական — տեխնիկական աշխատանքները կատարվում են շրջխնայդրամարկղների կողմից, շրջֆինբաժինների անմիջական ղեկավարությամբ:

Շրջֆինբաժնի և շրջխնայդրամարկղի վարիչները կրում են շրջանի տերիտորիայի վրա փոխառության իրացման պլանի կատարման և փոխառության միջոցների լրիվ ու ժամանակին գանձման պատասխանատվությունը:

Փոխառության կամպանիայի անցկացման անմիջականորեն մասնակցում են պրոֆմիությենական, կոմյերիտական կազմակերպությունները, կամավոր ընկերությունները, շրջանի շեֆական և մյուս հասարակական կազմակերպությունները, ինչպես և մամուլը:

4. Շրջխնայդրամարկղներն ապահովելով փոխառության գործառնական - տեխնիկական աշխատանքների համար գրվածքն իրենց ապարատում և փոխառության իրացման մեջ ընդգրկված գյուղական խնայդրամարկղներում, կատարում են շրջֆինբաժնի հետ միասին, սիստեմատիկ հրահանգումներ փոխառության իրացման աշխատանքներին մասնացկող գյուղխորհուրդներին և գյուղական կազմակերպություններին: Շրջխնայդրամարկղները մատակարարում են գյուղխորհուրդներին և նշված կազմակերպություններին ագիտացիոն — հրահանգչական և գործառնական նյութերով:

5. Փոխառության իրացումը գյուղում կատարվում է գյուղխորհուրդների ղեկավարությամբ և կոլ-

տնտեսությունների վարչությունների ակտիվ մասնակցությամբ:

Գյուղխորհուրդները ղեկավարում են փոխառության իրացման կամպանիան իրենց տերրիտորիայի վրա ինչպես կոլտնտեսությունների, այնպես և մենատնտեսների մեջ. տարածում են պարտատոմսերը մենատնտեսների մեջ, կազմակերպում են կոլտնտեսության վարչության հետ միասին անմիջականորեն կոլտնտեսական ոժանդակող հանձնաժողովի կողմից՝ կոլտնտեսականների մեջ փոխառության բաժնեգրությունը: Գյուղխորհուրդները կատարում են նույնպես պարտատոմսերի դիմաց մուծումների գանձումները կոլտնտեսականներից և կոլտնտեսականների բաժնեգրության վերաբերյալ հաշվարկումները խնայդրամարկղերի հետ:

6. Կոլտնտեսությունների վարչությունները ցույց են տալիս ակտիվ ոգնություն գյուղխորհուրդներին և կոլտնտեսությունների ոժանդակող հանձնաժողովներին՝ տանելու մասսայական բաժնեգրությունը կոլտնտեսականների մեջ: Յուրաքանչյուր կոլտնտեսության վարչությունը փոխառության աշխատանքները դնում է վարչության անդամներից մեկն ու մեկի վրա. կոլտնտեսության վարչության այդ անդամը պարտավորվում է՝

ա) Ամենուրեք մասնակցել կոլտնտեսության կից ոժանդակող հանձնաժողովի գործնական աշխատանքներին:

բ) Ղեկավարել լիազորների կոլտնտեսականներից բաժնեգրություն ընդունելու վերաբերյալ աշխատանքները:

գ) Հետևել և հսկել գյուղխորհրդի լիազորի կողմից կոլտնտեսականներից հավաքված մուծումների, ինչպես և այդ մուծումները լիազորի կողմից ժամանակին գյուղխորհրդին հանձնելու աշխատանքների վրա:

դ) Հսկել, վորպեսզի լիազորներն իր ժամանակին և ճիշտ կերպով հանձնեն պարտատոմսերը կոլտնտեսականներին. կոլտնտեսության վարչության այդ առանձնացված անդամը պատասխանատվություն է կրում՝ իրեն հանձնարարված փոխառության աշխատանքների համար, ինչպես կոլտնտեսության վարչության, այնպես ել գյուղխորհրդի առաջ:

7. Շրջանային ոժանդակող հանձնաժողովները ղեկավարում են շրջանի բոլոր ոժանդակող հանձնաժողովների փոխառության աշխատանքները:

Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները կազմակերպում և անց են կացնում փոխառության ագիտ-մասսայական աշխատանքները, ինչպես կոլտնտեսականների, այնպես ել մենատնտեսների մեջ:

Կոլտնտեսություններին կից ոժանդակող հանձնաժողովները կազմակերպում են փոխառության բաժնեգրությունը կոլտնտեսականների մեջ, ինչպես և ցույց են տալիս ակտիվ ոժանդակություն գյուղխորհուրդներին՝ մենատնտեսների մեջ փոխառությունն իրացնելու համար:

Կոլտնտեսություններին կից ոժանդակող հանձնաժողովներն առանձնացնում են կոլտնտեսական ակտիվից գյուղխորհրդի համար լիազորներ, մենատնտեսների մեջ պարտատոմսեր վաճառելու և մասնակցում

մենատնտեսների մեջ փոխառության տարածման համար գյուղխորհուրդների կողմից անցկացվող մասսայական ձեռնարկումներին:

8· Փոխառության իրացման ստուգիչ թվերը գյուղում հասցվում են միայն գյուղխորհուրդներին:

Արգելվում է ստուգիչ թվերը հասցնել կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և առանձին մենատնտես աշխատավորական անտեսություններին:

2· ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՑԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ

9· Կոլտնտեսականների մեջ փոխառության իրացումը կատարվում է «յերեք շարաթվա յեկամուտը «Ցերկրորդ հնգամյակի փոխառությանը» և վոչ մի կոլտնտեսական և կոլտնտեսուհի չբաժնեգրված փոխառությանը» լոզունգի տակ:

Ցեկամուտ ասելով պիտի հասկանար կոլտնտեսականի համայնացված և տնտեսության չհամայնացված մասի յեկամուտը:

10· Կոլտնտեսականները փոխառության պարտատոմսերը ձեռք են բերում կոլեկտիվ բաժնեգրության կարգով: Փոխառության բաժնեգրությանը մասնակցում է վոչ թե կոլտնտեսական ընտանիքը, այլ յուրաքանչյուր կոլտնտեսական և միայն դրամական արտահայտությամբ: Բաժնեգրությունն աշխորով չի թույլատրվում:

11· Պարտատոմսերի դիմաց վճարումները կոլտնտեսականները կարող են կատարել ըստ իրենց ցանկության՝ միանվագ, կամ մաս-մաս ամսական մուծումներով:

Կոլտնտեսությունները, մուծումների վճարումները կատարում են գյուղխորհրդի լիազորին, ի հաշիվ իրենց՝ դիմավորապես տնտեսության չհամայնացված մասի յեկամտից:

12· Բաժնեգրության գումարը մաս-մաս վճարելու դեպքում, առաջին մուծումն, ինչպես կարգ, պիտի կատարել 1933 թ. ոգոստոսի մեկից վոչ ուշ:

Վերջին մուծումը կատարվում է շրջգործկոմի կողմից սահմանված ժամկետին, սակայն համենայն դեպս 1934 թվի փետրվարի մեկից վոչ ուշ:

13· Խստիվ արգելվում է կոլտնտեսությունների վարչություններին՝ կոլտնտեսականների բաժնեգրության գումարները վճարել կոլտնտեսության ընդհանուր միջոցներից, ինչպես և մարել կոլտնտեսականների մուծումները՝ նրանց հասանելիք աշխորների գումարներից, այդպիսիք բռնագանձելու միջոցով:

Ինչպես է կատարվում բաժնեգրությունը կոլտնտեսության մեջ

14· Կոլտնտեսականների մեջ փոխառության բաժնեգրությունն անցկացնելու համար, ինչպես և բաժնեգրության գումարները նրանցից գանձելու և լրիվ գանձված գումարների դիմաց պարտատոմսեր հանձնելու համար, գյուղխորհուրդը կոլտնտեսության վարչության և կոլտնտեսության ոժանդակող հանձնաժողովի հետ միասին, առանձնացնում և յուրաքանչյուր կոլտնտեսության համար կոլտնտեսական ակտիվից լիազորներ:

15· Յուրաքանչյուր լիազոր ստորագրում է գյուղխորհուրդներին տրվող պարտավորագրերը ձև № 4

բլանկի վրա, յերկու որինակից, վորոնցից մեկը պահվում է գյուղխորհրդի մոտ, իսկ մյուսն ստանում է անձամբ լիազորը:

Ծանոթություն.— Պարտավորագրերի հակառակ յերեսի վրա գետեղված է անձնական հաշիվ, լիազորների հետ փոխառության բոլոր հաշվարկումների դրանցումների համար: Այդ դրանցումը կատարում է գյուղխորհուրդը պարտավորագրերի յերկու որինակի վրա:

16. Կոլտնտեսականներին, փոխառության աշխատանքներով լավ սպասարկելու համար, գյուղխորհուրդը կոլտնտեսական ոժանդակող հանձնաժողովի և կոլտնտեսության վարչության առանձնացված անդամի հետ միասին բաժանում է աշխատանքները լիազորների մեջ և ամրացնում է յուրաքանչյուր լիազորին մուծումների հավաքման ամբողջ ժամանակաշրջանում կոլտնտեսականների վորոշ խմբի, դլխավորապես կոլտնտեսական արտադրական բրիգադի:

17. Կոլտնտեսականներից բաժնեգրություն ընդունելու և մուծումները հավաքելու համար, գյուղխորհուրդը տալիս է յուրաքանչյուր լիազորին բաժնեգրման թերթեր (ձև № 1ա), անդորրագրային գրքույկներ (ձև № 2):

Գյուղխորհուրդն անդորրագրերը պիտի համարակալի (և նրանց արմատները), յուրաքանչյուր գրքույկի մեջ և գրի գրքույկի շապիկի վրա (կամ գրքույկի մեջ վերջին արմատի հակառակ կողմի վրա), թե գրքույկի մեջ ինչքան համարակալված անդորրագրեր կան (և նրանց արմատները):

18. Լիազորները կատարում են կոլտնտեսականների բաժնեգրությունը, կոլտնտեսության ոժանդակող հանձնաժողովի գեկավարությամբ՝ ընդհանուր ժողովում, կամ ընդհանուր ժողովից հետո, կոլտնտեսականներին դիմելու միջոցով:

Ինչպես է գյուղխորհրդի լիազորն ընդունում կոլտնտեսականների բաժնեգրությունը

19. Լիազորը, իրեն կցված կոլտնտեսականների խմբին այցելելիս, պարզում է, թե յուրաքանչյուր կոլտնտեսականն ինչ գումարի պարտատոմսեր է ցանկանում ձեռք բերել: Հայտարարված գումարը կոլտնտեսականը գրում է բաժնեգրման թերթի մեջ և դնում է նրա վրա իր անուն, ազգանունը, հասցեով բաժնեգրության գումարն իր ստորագրությամբ: Բաժնեգրման թերթում կոլտնտեսականը ցույց է տալիս, թե ինչպիսի (10, 25 և 100 ռուբլիանոց) և վոր մասի պարտատոմսերի յի (անպայման շահող կամ տոկոսաբեր) նա ցանկանում է բաժնեգրվել:

20. Բաժնեգրության ժամանակ լիազորն ստանում է կոլտնտեսականից առաջին մուծումը: Եթե կոլտնտեսականը բաժնեգրման ժամանակ չի վճարում առաջին մուծումը, ապա մուծումը պիտի վճարվի 1933 թվի ողոստոսի մեկից վոչ ուշ:

Ինչպես է լիազորը հավաքում բաժանորդներից մուծումները և հանձնում հավաքված դրամները գյուղխորհուրդներին

21. Բաժանորդից մուծումն ստանալու ժամանակ, լիազորը տալիս է բաժանորդին ձև № 2 անդորրագիրը: Լիազորը գրում է անդորրագրի ան անդորրագրի

արմատի մեջ կոլտնտեսականի ազգանունը, մուծման գումարը և վճարման օրը և ստորագրում է անդորրագրի վրա՝ մուծումն ստանալու համար: Բաժանորդն ստորագրում է անդորրագրի արմատի վրա, հաստատելով իր ստորագրությամբ մուծման գումարն ու գումարի վճարման օրը:

Բաժանորդի անգրագիտության դեպքում, ստորագրում է վճարմանը ներկա եղողներից վորևե մեկը:

22. Բաժնեգրությունը կատարելուց հետո, լիազորը ներկայացնում է լրացված բաժնեգրման թերթերը կոլտնտեսության վարչության անդամին՝ ստուգելու համար: Ստուգված բաժնեգրման թերթերը լիազորը հանձնում է գյուղխորհրդին՝ բաժնեգրության ժամանակ հավաքված դրամների հետ միասին (բաժանորդների առաջին մուծումները):

Դրամը հանձնելու հետ միասին, լիազորը ներկայացնում է գյուղխորհրդին անդորրագրային գրքույկը, հանձնված գումարի ճշտությունն անդորրագրերի արմատներով ստուգելու համար:

23. Լիազորի կողմից հանձնված, լրացված բաժնեգրման թերթերի հիման վրա, գյուղխորհուրդը կազմում է յերկու օրինակից (ձև № 5) հաշվարկման տեղեկագիրը՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի մուծումների հաշվառման համար:

Հաշվարկման անդորրագիրը տարվում է յուրաքանչյուր խումբ կոլտնտեսականների համար առանձին, վորին կցված է լիազորը: Հաշվարկման տեղեկագրի մեկ օրինակը պահվում է գյուղխորհրդի մոտ, իսկ մյուս օրինակը հանձնվում է լիազորին:

24. Դրամը հանձնելու ժամանակ լիազորի կողմից ներկայացված անդորրագրերի արմատներով, գյուղխորհուրդը գրում է հաշվարկման անդորրագրի իր մոտ յեղած օրինակի մեջ վճարման օրը, յուրաքանչյուր կոլտնտեսականից մուծված գումարը:

Յուրաքանչյուր անդորրագրի արմատի հետևում գյուղխորհուրդը նշանակում է անում այն մասին, վոր բաժանորդի կողմից կատարված մուծումը գրանցված է ձև № 5 հաշվարկման անդորրագրի մեջ:

25. Լիազորի կողմից հանձնված մուծումների գումարը, գյուղխորհուրդը գրանցում է լիազորի կողմից ներկայացված լիազորի անձնական հաշվի՝ պարտավորագրի հետևի կողմի (ձև № 4) և գյուղխորհրդում պահվող պարտավորագրի հետևի կողմի մեջ:

Լիազորի կողմից ներկայացված պարտավորագրի մեջ կատարված յուրաքանչյուր գրանցումը հաստատվում է գյուղխորհրդի նախագահի կամ քարտուղարի ստորագրությամբ:

26. Կոլտնտեսականներից հերթական մուծումների հավաքումը, լիազորը կատարում է մուծումների վճարումների համար սահմանված ժամկետներին: Կոլտնտեսականներից հերթական մուծումների ընդունումը և հավաքված գումարների հանձնումը գյուղխորհրդին լիազորը կատարում է 21, 24 և 25 հոդվածներով նշված կարգով:

27. Գյուղխորհրդից ստացված ձև № 5 (հոդ. 23) հաշվարկման անդորրագրի օրինակը լիազորը պահում է իր մոտ մինչև մուծումների հավաքման վերջը:

Այդ հաշվարկման անդորրագրերի մեջ լիազորն ինքն է գրանցում կոլտնտեսականի յուրաքանչյուր մուծումը:

28· Այն լիազորները, վորոնք աշխատանքները կատարում են գյուղխորհրդի բնակած վայրում, բաժանորդներից հավաքված մուծումները հանձնում են գյուղխորհրդին ամեն որ:

Մնացած լիազորները հանձնում են հավաքած մուծումները գյուղխորհուրդներին, առանց ձգձգումների և համենայն դեպս՝ առնվազն յերեք որը մեկ անգամ:

29· Լիազորները, ինչպես և կոլտնտեսությունների վարչությունների առանձնացված անդամները, պարտավոր են հետևել, վորպեսզի բաժանորդները բաժնեգրության մուծումները վճարելիս ստորագրեն անդորրագրերի արմատների վրա:

30· Լիազորներից ստացված բաժնեգրման թերթերը գյուղխորհուրդը պահում է առանձնացված, ըստ յուրաքանչյուր լիազորի և կոլտնտեսության, մինչև բաժնեգրության հաշվարկման և վճարված պարտատոմսերի հանձնումը բաժանորդներին:

31· Լիազորների կողմից ոգտագործված անդորրագրային գրքույկները հանձնվում են գյուղխորհրդին, վորը պահում է այդպիսիք մինչև պարտատոմսերի հանձնման վերջը բաժանորդներին:

Ինչպես է գյուղխորհուրդը հայտնում խնայդրամարկղին բաժնեգրման մասին տեղեկությունը

32· Կամպանիայի առաջին ժամանակաշրջանում յուրաքանչյուր 3, 8, 13, 18, 23 և 28-ին, իսկ հետագայում՝ խնայդրամարկղի կողմից նշված ժամկետներին գյուղխորհուրդը ներկայացնում է խնայդրամարկղին ձև № 16ա հաշվետու տեղեկագիրը՝ կոլտնտեսականների բաժնեգրության արդյունքների մասին:

Հաշվետու տեղեկագրերի մեջ ցույց է տրվում բաժնեգրության գումարը և բաժանորդների քանակը՝ յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին:

Առաջին անգամ ձև № 16ա տեղեկագիրը կազմվում է այսպես.— հաշվարկման տեղեկագրի (ձև № 5) մեջ, յուրաքանչյուր կոլխոզային բաժնեգրությունը դրանցելուց հետո, գյուղխորհուրդը դուրս է բերում բաժնեգրության գումարը և կոլտնտեսականների թիվն ըստ առանձին տեղեկագրերի· բոլոր հաշվարկման տեղեկագրերի գումարներն ըստ առանձին կոլտնտեսության գումարվում են· ստացված յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին բաժնեգրության ընդհանուր գումարը և բաժանորդների ընդհանուր թիվը գյուղխորհուրդը գրանցում է ձև № 16ա հաշվարկման տեղեկագրի մեջ:

33· Հետագայում, գյուղխորհուրդը, ձև № 16ա հաշվարկման տեղեկագիրը կազմելու համար, սահմանված ժամկետներին հաշվի է առնում ըստ յուրաքանչյուր հաշվարկման տեղեկագրի՝ բաժնեգրման թերթերով նոր ընդունված բաժնեգրության գումարը և բաժանորդների քանակը:

Յուրաքանչյուր հաշվարկման տեղեկագրում նոր ընդունված բաժնեգրության գումարները գրանցվում են առանձին տողով, վորից հետո, նույնպես առանձին տողով գրվում է բաժնեգրության ընդհանուր գումարը և բաժանորդների ընդհանուր թիվը կամպանիայի սկզբից: Հաշվարկման տեղեկագրերով հաշվետու ժամանակաշրջանի համար և կամպանիայի սկզբից դուրս բերված գումարները հաշվում են ըստ յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության և մտցվում են ձև № 16ա հերթական տեղեկությունների մեջ:

Ինչպես է կատարվում վճարված պարտատոմսերի հանձնումը բաժանորդներին

34· Խնայդրամարկղների պահանջով, գյուղխորհուրդը պարտավոր է կոլտնտեսականների հաշված բաժնեգրման թերթերի հիման վրա հայտնել նրան, թե փոխառության ինչպիսի պարտատոմսերի (ըստ մասերի և արժեքների) և ինչ գումարով են բաժանորդագրվել կոլտնտեսականները:

35· Բաժանորդներից պարտատոմսերի դիմաց բոլոր մուծումներն ստանալուց և կոլտնտեսականների բաժնեգրությունը մարելու համար մուծված ամբողջ գումարը լրիվ կերպով խնայդրամարկղը հանձնելուց հետո, գյուղխորհուրդը հանձնում է խնայդրամարկղին կոլտնտեսականների բաժնեգրման թերթերը, բաժանորդներին հանձնելու համար պարտատոմսեր ստանալու պահանջագրի հետ միասին: Խնայդրամարկղը տալիս է գյուղխորհրդին վճարված, յուրաքանչյուր բաժանորդի համար փաթեթների մեջ առանձնացված պարտատոմսերը և վերադարձնում է բաժնեգրման թերթերը:

Ստացված պարտատոմսերը գյուղխորհուրդը մուտք է անում «տեղեկագրի պարտատոմսերի մուտքի և ելքի» № 6 ձևի մեջ:

Պարտատոմսերի հանձնումը գյուղխորհուրդը կատարում է լիազորների միջոցով, ամենակարճ ժամանակամիջոցում

36· Եթե առանձին կոլտնտեսականները, մասամաս վճարման ժամկետը վերջանալուց հետո, մուծում են բաժնեգրության ամբողջ գումարը, ապա գյուղխորհուրդն անմիջապես պիտի հանձնի բաժանորդներին վճարված պարտատոմսերը:

37· Բաժանորդներին հանձնելու համար, գյուղխորհրդից պարտատոմսերն ստանալու ժամանակ, լիազորը կոլտնտեսության վարչության առանձնացված անդամի հետ միասին պիտի ստուգի յուրաքանչյուր բաժանորդի համար բաժնեգրման թերթերով առանձնացված պարտատոմսերի ճշտությունը:

Լիազորին հանձնված պարտատոմսերի գումարը գյուղխորհուրդը դուրս է գրում՝ վորպես յելք ձև № 6 տեղեկագրով և գրանցում է լիազորի անձնական հաշվի մեջ, գյուղխորհրդում պահվող պարտավորագրի (ձև № 4) և լիազորի կողմից ներկայացված պարտավորագրի հետևի կողմի վրա:

Լիազորը պարտատոմսերն ստանալու համար ստորագրում է գյուղխորհրդի մոտ պահվող պարտավորագրի վրա (ձև № 4):

38· Յուրաքանչյուր բաժանորդ, լիազորից պարտատոմսերն ստանալու ժամանակ, հանձնում է նրան, պարտատոմսերի արժեքի վճարումը հաստատող իր մոտ գտնվող բոլոր անդորրագրերը (ձև № 2) և ստորագրում է պարտատոմսերն ստանալու համար ձև № 5 հաշվարկման տեղեկագրի վրա:

Ձև № 5 հաշվարկման անդորրագրի իր մոտ գտնված որինակը՝ պարտատոմսերն ստանալու մասին՝ բաժանորդների ստորագրությունների հետ միասին և բաժանորդների կողմից պարտատոմսերի փոխարեն հանձնված անդորրագրերը լիազորը հանձնում է գյուղխորհրդին՝ պահելու համար: Գյուղխորհուրդը պարտավոր է ստուգել ձև № 5 հաշվարկման տեղեկագրով

յուրաքանչյուր բաժանորդի կողմից պարտատոմսերն ստանալու համար հանձնած անդորրագրերի առկայությունը և բաժանված պարտատոմսերի գումարը դուրս և դրում լիազորի անձնական հաշվից ձև № 4 պարտավորագրերի վրա:

39· Այն պարտատոմսերը, որոնք բաժանորդների բացակայության պատճառով (մեկնում և այլն) չեն հանձնվել տերերին, գյուղխորհուրդը պարտավոր է վոչ ուշ, քան մեկ ամսից հանձնել այդպիսիք ինդրդրամարկղին ցուցակի հետ միասին, ցույց տալով ցուցակի մեջ բաժնեգրության գումարը (ըստ փոխառության մասերի և պարտատոմսերի արժեքների) և յուրաքանչյուր բաժանորդից մուծված գումարը:

Ինդրդրամարկղն ստանձնացնում է յուրաքանչյուր բաժանորդի համար համապատասխան պարտատոմսեր և անց է կացնում պարտատոմսերը՝ վորպես ի պահ՝ բաժանորդի անունով: Բաժանորդները հետագայում ցանկացած ժամանակը կարող են իրենց պարտատոմսերն ստանալ անմիջականորեն ինդրդրամարկղից, կամ գյուղխորհրդի միջոցով, հանձնելով պարտատոմսերի փոխարեն մուծումների վճարումները հաստատող (ձև № 2) անդորրագրերը:

3· ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՏՄԱՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՑԻ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՄԵՋ

40· Փոխառության իրացումն աշխատավոր գյուղացի մենատնտեսների մեջ կատարվում է «աշխատավոր մենատնտեսներ՝ վաղվա կոլտնտեսականնե՛ր, հավատարիք կոլտնտեսականներին: Ցերեք չարաթվա յեկամուտը «Ցերկրորդ հնգամյակի փոխառության» բաղնեղի տակ:

41· Մենատնտեսների մեջ փոխառության տարածման հիմնական մեթոդը հանդիսանում է պարտատոմսերի վաճառքը կանխիկ վճարման՝ մենատնտեսների կողմից պարտատոմսի արժեքը միանվագ վճարելու կարգով: Պարտատոմսերի վաճառքը կատարվում է աշխատավոր մենատնտեսների տներն այցելելու ճանապարհով:

42· Եթե աշխատավոր մենատնտեսը չի կարող մեկ անգամից վճարել ձեռք բերվող պարտատոմսերի արժեքը, ապա նա կարող է վերցնել իր վրա դրավոր արժեքը, ապա նա կարող է վերցնել իր վրա դրավոր ձևով ինքնապարտավորագիր՝ հայտարարված ամբողջ գումարի պարտատոմսերը դնելու գյուղխորհրդի կողմից սահմանված, համաձայնեցված մենատնտեսների հետ՝ ժամկետներին, բայց վոչ ուշ, քան 1933 թվի սեպտեմբերի մեկը:

Ինքնապարտավորագրերն ընդունելու հետ միաժամանակ, մենատնտեսը մուծում է առաջին վճարումը և ստանում է մուծված գումարի չափով պարտատոմսեր:

Ինքնապարտավորագրերի համաձայն, մենատնտեսի յուրաքանչյուր մուծումը պիտի ծածկի մեկ կամ մի քանի պարտատոմսերի արժեքը (10, 20, 25, 50 ռուբլի և այլն), վորոնք դրամն ստանալու ժամանակ տրվում է մենատնտեսին, մուծած գումարի չափով:

43· Գյուղխորհուրդը կազմում է անվանական ցուցակ այն մենատնտեսների, վորոնք պարտատոմսերը դնելու համար՝ ինքնապարտավորություն են վերցրել իրենց վրա:

Այդ ցուցակով գյուղխորհուրդը հսկում է ինքնա-

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՍՍՐ

1-3369թ

պարտավորագրով մենատնտեսների կողմից պարտադրումները ժամանակին գնելու վրա:

44. Գյուղխորհուրդն ստանում է խնայդրամարկղից, վորին ինքն ամրացված է, ավանսով պարտադրումներ՝ մենատնտեսներին վաճառելու համար: Ստացված պարտադրումները գյուղխորհուրդը հաշվի յե առնում ձև № 6 տեղեկագրում: Ավանսը լրացվում է ստանձնարար՝ համաձայն նրա ծախսերի:

45. Պարտադրումները մենատնտեսներին վաճառելու համար, գյուղխորհուրդը, գյուղական ոժանդակող հանձնաժողովի հետ միասին, առանձնացնում է կոլտնտեսական ակտիվից և գյուղական հասարակայնությունից լիազորներ:

Յուրաքանչյուր լիազոր ստորագրում է գյուղխորհրդին տրվող պարտավորագիր ձև № 4 յերկու որինակից, վորից մեկը տրվում է լիազորին, իսկ մյուսը պահվում է գյուղխորհրդում:

Ծանոթություն. Ձև № 4 պարտավորագրի հետևը, անձնական հաշվի վրա, գյուղխորհուրդը գրանցում է պարտադրումների վաճառքի վերաբերյալ լիազորների բոլոր հաշվարկումները:

46. Գյուղխորհուրդը կցում է յուրաքանչյուր լիազորին աշխատանքի վորոշ բնագավառ՝ մենատնտեսների մեջ պարտադրումների վաճառք կատարելու դորձում:

Լիազորը պարտադրումների տարածման աշխատանքները կատարում է նրան հատկացված մասում:

47. Լիազորն ստանում է գյուղխորհրդից ավանսով պարտադրումներ՝ մենատնտեսներին վաճառելու համար, ստորագրելով պարտավորագրի (ձև № 4) հետևը՝ անձնական հաշվի վրա, վորը պահվում է գյուղխորհրդում: Լիազորին հանձնված պարտադրումները գյուղխորհուրդը դուրս է գրում վորպես յելք ձև № 6 տեղեկագրով:

48. Մենատնտեսներին այցելելու ժամանակ, լիազորը, բացատրական աշխատանքների հիման վրա, կատարում է պարտադրումների վաճառքը կանխիկ վճարով, տալով մենատնտեսներին նրանց կողմից մուծած դումարի չափով պարտադրումներ:

49. Լիազորները, վորոնք փոխադրության աշխատանքները կատարում են գյուղխորհրդի բնակավայրում, տալիս են փոխադրությունից մուծված դրամները գյուղխորհրդին ամեն որ:

Մնացած լիազորները հանձնում են դրամները գյուղխորհրդին առանց ձգձգումների, բայց համենայն դեպս, առնվազն յերեք որը մեկ անգամ:

Ծանոթություն.— Լիազորի կողմից հանձնված դրամների դումարը գյուղխորհուրդը գրանցում է լիազորի կողմից դրամը հանձնելու ժամանակ ներկայացված և գյուղխորհրդում գտնված պարտավորագրերի (ձև № 4) հետևը՝ անձնական հաշվի վրա: Լիազորի կողմից ներկայացված պարտավորագրի վրա կատարված այդ գրանցումը, հաստատվում է գյուղխորհրդի նախագահի կամ քարտուղարի ստորագրությամբ:

4. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՄՈՒԾՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՀԵՏ՝ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

50. Փոխառության դիմաց յուրաքանչյուր լիազորից ստացված դրամական գումարները գյուղխորհուրդը մուտք է անում դրամական (դրամարկղային) գրքի «այլ գումարներ» սյունյակում: Նույն այդ գումարները գրանցվում են նաև «Հաշվարկումներ գանձապան անձանց և հիմնարկների հետ» գրքի մեջ:

Ինքնուրույն բյուջե չունեցող՝ գյուղխորհուրդներում՝ «Զանազան գումարներ» գրքում:

«Հաշվարկումներ զանազան անձանց և հիմնարկների հետ» գրքում գյուղխորհուրդը բաց է անում առանձին յերեսներ՝ մենատնտեսների պարտատոմսերի վաճառքից ստացված գումարները և կոլտնտեսականների բաժնեգրությունից մուծված գումարները գրանցելու համար:

51. Գյուղական խնայդրամարկղին ամրացված գյուղխորհուրդները հանձնում են այդ խնայդրամարկղին փոխառությունից ստացված գումարները վոչ ուշ, քան դրամն ստանալու հաջորդ օրը:

Խնայդրամարկղները, վորոնք ամրացված են շրջխնայդրամարկղներին (պետ. փոխառությունների սեկտորին), ուղարկում են շրջքաղխնայդրամարկղին փոխառությունից մուծված գումարները հատուկ մարդու միջոցով, կամ փոստային փոխադրումով, յուրաքանչյուր ամսի 3, 8, 13, 18, 23 և 28-ին:

Գյուղխորհուրդը հանձնում է դրամները խնայդրամարկղին հետևյալ հայտարարությամբ.

առ «Յերկրորդ հնգամյակի փոխառության . . . գյուղխորհուրդ
Մենատնտեսներին վաճառված պարտատոմսերից . . . . . ռուբլի

Ըստ կոլտնտեսականների բաժնեգրության.

1. . . . . . . կոլտնտեսության անդամներից . . . . ռուբ
. . . . . . » » . . . . ռուբլի
և այլն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության

Ընդամենը . . . . ռուբլ

Դրամը փոստով փոխադրելու դեպքում, այդ հայտարարությունը ցույց է տրվում «Դրամոր հայտնու-
թյան համար» փոստային փոխադրման բլանկի վրա:

Դրամներն ուղարկելու համար՝ փոստային ծախքերը գյուղխորհուրդը վճարում է փոխառության աշխատանքների համար սահմանվելիք վարձատրությունների հաշվին (հոդ. 58):

52. Փոխառության պարտատոմսերը, ինչպես և փոխառության մուծված գումարները մինչև խնայդրամարկղին հանձնելը, կամ ուղարկելը պահվում են գյուղխորհրդի կողմից՝ դրամական գումարները գյուղխորհրդում պահելու համար սահմանված ընդհանուր կարգով:

53. Խնայդրամարկղները պարտավոր են իրենց կցված գյուղխորհուրդներին՝ իր ժամանակին մատակարարել հետևյալ գործառնական բլանկները.

ա) ձև № 1ա կոլտնտեսականների բաժնեգրման թերթերը.

բ) անդորրագրային գրքույկները (ձև № 2).

գ) փոխառության իրացման վերաբերյալ լիազորների պարտավորագրերը (ձև № 4).

դ) կոլտնտեսականների մուծումների հաշվառման վերաբերյալ հաշվարկային տեղեկագրերը (ձև № 5).

յե) պարտատոմսերի մուտքի և ելքի տեղեկագրերը (ձև № 6).

զ) կոլտնտեսականների բաժնեգրության մասին գյուղխորհրդի հաշվեառու տեղեկագրերը (ձև № 16ա):

5. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

54. Գյուղխորհուրդները կրում են նյութական պատասխանատվություն ԽՍՀՄ ՖԺԿ-ի առաջ պարտատոմսերի, պարտատոմսերից ստացված գումարների ամբողջության և պահպանման համար, ինչպես և պատասխանատու են ԽՍՀՄ ՖԺԿ-ի առաջ լիազորների ընտրության և փոխառության վերաբերյալ նրանց կատարած աշխատանքների վրա հսկելու համար:

Լիազորները կրում են գույքային պատասխանատվություն ֆինանսական մարմինների առաջ՝ փոխառության բաժնեգրությունից, պարտատոմսերի վաճառքից ստացված դրամների պահպանման, իր ժամանակին դրամները գյուղխորհրդին հանձնելու, ինչպես և գյուղխորհրդից ստացված պարտատոմսերի պահպանման համար:

ԽՍՀՄ Ֆինժողկոմատը կրում է պատասխանատվություն բաժանորդների առաջ՝ լիազորներին՝ վերջիններիս միջոցով եվ գյուղխորհուրդներին հանձնված դրամների ամբողջականության և պահպանման համար, ինչպես և դրա, հավասար պատասխանատվություն՝ գյուղխորհրդին, վերջիններիս միջոցով եվ լիազորներին հանձնված պարտատոմսերի համար, որոնք տրվում են հանձնելու բաժանորդներին:

6. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՈՎ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

55. Ոժանդակող հանձնաժողովները, ֆինմարմինները ու խնայդրամարկղները իրականացնում են խնայողական հսկողություն փոխառության մուծված դրամների վրա, ակտած լիազորներից վերջացրած խնայդրամարկղներով:

Ստուգելու համար փոխառության հաշվարկումների ժամանակին և ճիշտ կատարումը, խնայդրամարկղներում և գյուղխորհուրդներում, ինչպես և դրամների հանձնումը լիազորների կողմից, պարբերաբար առանձնացվում են հասարակական բրիգադներ:

Շրջխնայդրամարկղների և շրջֆինբաժինների ղեկավարությամբ, բրիգադները հետազոտում են շրջանի փոխառության հաշվարկների դրությունը ամբողջությամբ:

Ինչպես շրջոժանդակող հանձնաժողովները, այնպես եվ գյուղխորհրդին և կոլտնտեսության կից ոժանդակող հանձնաժողովները պիտի տանեն մշտական հսկողություն այն բանի վրա, որպեսզի փոխառությունից մուծված դրամները չձգձգվեն լիազորների ձեռքում, գյուղխորհուրդներում և խնայդրամարկղներում, այլ ժամանակին հանձնվեն ՖԺԿ-ի հաշիվը:

7. ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՏՆԱՅՆԱ-ԳՈՐԾ-ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵՋ

56. Գյուղի տնայնագործ-արհեստավորական արտելների անդամների մեջ փոխառության բաժնեգրությունը կատարվում է կոլեկտիվ բաժնեգրման կար-

դով, նույն պայմաններով, ինչ վոր սահմանված են կոլտնտեսականների համար։

Այդ արտելների անդամների բաժնեգրության հաշվարկումը դրվում է արտելների վարչությունների վրա։ Արտելների վարչությունները կատարում են մուծումների գանձումները բաժանորդներից, տանում են բաժնեգրության վերաբերյալ բոլոր հաշվարկումներն այն խնայդրամարկղների հետ, վորոնց կցված է արտելը, ստանում են խնայդրամարկղից լրիվ վճարված պարտատոմսերը՝ անմիջապես բաժանորդներին հանձնելու համար, նրանց կողմից մուծված գումարի չափով։

8. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԵՋ

57. Գյուղական ձեռնարկությունների և հիմնարկների (նույն թվում ՄՏԿ-ները և խորհտնտեսությունները) բանվոր - ծառայողների մեջ կատարվում է կոլեկտիվ բաժնեգրություն քաղաքի բանվորների և ծառայողների կոլեկտիվների համար սահմանված միևնույն պայմաններով։ Գյուղական վայրերի բանվորներն ու ծառայողները բաժնեգրվում են փոխառությանն իրենց ոժանդակող հանձնաժողովների միջոցով և վճարում են բաժնեգրության գումարներն իրենց կոլեկտիվի ադմինիստրացիայի միջոցով մինչև 1934 թվի ապրիլի մեկը ժամկետով։ Բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժնեգրության կարգն ու պայմանները նշված են ԽՍՀՄ Ֆինժողկոմատի՝ «Փոխառության իրացման մասին՝ քաղաքի աղքատնակչության մեջ» հրահանգում։

9. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ — ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

58. Կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ փոխառության իրացման աշխատանքների համար, գյուղխորհուրդներն ստանում են վարձատրություն խնայդրամարկղը մուծած փոխառության գումարի 1 տոկոսի չափով։

Վարձատրությունը տրվում է խնայդրամարկղների կողմից յերկու ժամկետներում. 1933 թ. սեպտեմբերի 1-ին գյուղխորհուրդն ստանում է մեկ տոկոս, մինչ այդ ժամկետը խնայդրամարկղը մուծած գումարներից և բաժնեգրությունը վերջացնելուց հետո՝ գյուղխորհուրդն ստանում է 1 տոկոս 1933 թվի սեպտեմբերի 1-ից մինչև փոխառության իրացման հաշվարկումները խնայդրամարկղների հետ վերջանալը որը, խնայդրամարկղը մուծված գումարից։

Ստացված վարձատրության գումարները գյուղխորհուրդն ոգտագործում է իր տեխնիկական ապարատի և փոխառության իրացման հետ կապված այլ ծախսերը ծածկելու համար։

10. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ՑԵՎ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

59. Փոխառության մասսայական - քաղաքական աշխատանքների լավագույն նմուշների և փոխառության իրացման հաջող արդյունքների համար պարգևատրվում են ոժանդակող հանձնաժողովները, հասարակական կազմակերպությունները, կոլտնտեսությունները, կոլեկտիվները և առանձին ակտիվիստնե-

րը (ոժանդակող հանձնաժողովի անդամները, լիազորները, գյուղխորհրդի աշխատակիցները և այլն)։

Շրջօժանդակող հանձնաժողովները հայտաբերում են փոխառության աշխատանքների լավագույն ստորին ոժանդակող հանձնաժողովներին, հասարակական կազմակերպություններին և առանձին կոլեկտիվներին և ներկայացնում են այդպիսիներին պարգևատրելու համար։

Գյուղխորհուրդներին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին և այլն կից ոժանդակող հանձնաժողովներն իրենց հերթին հայտաբերում են առանձին ակտիվիստ հարվածայիններին, վորոնք ցուցաբերել են փոխառության աշխատանքների լավագույն նմուշներ և ներկայացնում են այդ ակտիվիստներին պարգևատրելու համար։

Պարգևատրման կարգն ու պայմանները սահմանվում են ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի նախագահության կից պետավարկին և խնայգործին ոժանդակող կենտրոնական հանձնաժողովի կողմից հաստատված հրահանգով։

ԽՍՀՄ-Ի ՖԺԿ-Ի ԿՈԼԵԳԻԱՅԻ ԱՆԴԱՄ

Պետաշխինայդրամարկղների և պետավարկի
գլխավոր վարչության պետ՝ ԲՈԳԱՏԻՆ

Պետփոխառությունների սեկտորի
ղեկավար՝ ՏԱՐԱԿԱՆՈՎ.

ԽՍՀՄ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պետհրատի տպարան—Յերևան—1933

Գլավլիտ 9141 Պատվեր 1204 Տիրաժ 8000

ՀՀ Ազգային գրադարան
NL0766971

1933 р. — 269

1

3136